

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏՍՃԿԱՍՏՏԱՆՈՒՄ

Առկախ խնդիրները

«Բիզանդիանը» (փետրւար 19) գրում է, որ Պատրիարքական Սրբազան տեղապահի յանձնարարութեամբ և քաղաքական ժողովի որոշմամբ պատրիարքարանի վարչական դիւանը առկախ մնացած խնդիրների մի ցուցակ է կազմել 30—40 խնդիրներ արձանագրելով. «առանց գոնէ բացատրելու քանի մը տողով թէ այդ գործերուն համար ո՞ր թուականներին ինչ խնդրուած է կառավարութենէն, ինչ պատասխանուած է և ո՞ւր կը մնայ գործը»։— Կանելով որ արձանագրուած խնդիրներից շատերը յարաբերական խնդիր լինելու հանգամանք չունեն, աւելացնում է. «աւելորդ խնդիրներով խճողուած այս ցուցակը Տեղապահն ու վարչութիւնը շփոթեցնելէ դատ ուրիշ օգուտ չի կրնար ունենալ. Ուրիշներ ալ կան, որ ընդհանուր սեպհականութեանց խնդրոյն մաս կը կազմեն»։

«Ազգին համար չորս կենսական խնդիրներ կան այս միջոցիս, հողային խնդիր, ազգային սեպհականութեանց խնդիր, կրթական խնդիր և զինուորագրութեան խնդիր»։

1. Հողային խնդրի առիթով քաղաքական ժողովի մէջ (փետ. 18-ին), սրին ներկայ են եղել Օս. Երես. Ժողովի հայ անդամները, խօսուել է երկարօրէն։ Գարայեան էֆ. բացատրում է պատրիարքարանից եղած դիմումները, Պետական Խորհուրդի մէջ հողային խնդրի մասին պատրաստուած օրինագծի պարունակութիւնը, այս մասին քննական տեղեկագրերն ու խնդրի ստացած վերջնական ձևը։

Որոշուեց հողային խնդրի օրինագիծը Օս. Երես.

ժողովին ներկայացնելուց առաջ նոյն ժողովի երեսփոխաններին ներկայութեամբ նորից քննել խնդիրը, պատրաստել խնդրին վերաբերեալ ապացոյցները, որոնք պէտք է ներկայացուեն Օսմ. Երես. ժողովին, դրաւումս՝ հողերի խնդրի մէջ ազգի իրաւունքը հաստատելու համար:

Հողային խնդրի վերաբերութեամբ ընդհանուր վհատական տրամագրութիւն է նկատուում Տաճկահայոց մէջ: Ընդհանուր կարծիքն այն է, որ թէև Օսմանեան արդի սահմանադրական կառավարութիւնը ցոյց է տալիս, թէ երկիրը հաւասարութեան, արդարութեան և անխտիր իրաւարարութեան սկզբունքով է կառավարում և կառավարելու է, սակայն չեն դադարում մասնակի զրկանքները ոչ իսլամն ըրի վերաբերութեամբ, տեղի ունեցաւ Ադանայի և Կիլիկիայի ահռելի կոտորածը, հայերի հողերը դեռ յափշտակիչ քուրդերի և մահմետականների ձեռքին են մնում և կառավարութիւնը սովորած լինելով նայել հայերի վերայ որպէս անվտանգ տարրի վերայ, որ վարժուել է զրկանքների համբերել, չի կամենում քիւրդերին դիպչել, նրանց չգրգռելու համար, այլ մինչև անգամ հովանաւորում է նրանց ապօրինութիւնները որպէս պետութեան կրօնը դաւանող մահմետականների:

2, Ազգային սեպհականութեան խնդիրներ: — Փետրվարի 18-ին քաղաքական ժողովում խորհրդակցութեան առարկան եղել է Ղալաթիայի Խաստախանէի խնդիրը: Այդ խնդիրը դատավարութեան մէջ է: Այս մասին պատրիարքարանից դիմումներ եղել են վարչապետութեան, դատական նախարարութեան, էվգաֆի նախարարութեան, ուր և մնացած են. մինչդեռ հարկ էր այս խնդիրը պարզել իւր բոլոր պարագաներով, և ազգի զրկանքները հասկացնել:

Որոշուել է՝ որ քաղաքական ժողովից, երեսփոխաններից և փաստաբաններից մի պատգամաւորութիւն ներկայանայ Վարչապետին ու դատական նախարարին բացատրելու, թէ ինչ սխալ և անարդար միջոցների են դիմում ազգի իրաւունքը նրա ձեռքից խլելու համար:

Ազգային առկախ խնդիրների առիթով Տաճարը (Թ. 7) գրում է.

«Ազգային Վարչութեան ժողովներն եւ Խորհուրդները կը շարունակեն գումարումն ընել եւ խորհրդակցութիւններ կատարել ընթացիկ գործերու վրայ, որոնց գոհացում տալու կաշխատուի կարելութեան սահմանին մէջ: Գաւառներէ եղած խնդրանքներու պատասխանները կը տրուին անյապաղ, եւ տեղապահ Ա.-ը մեծ գործունէութիւն կը ցուցնէ, ամիսներէ ի վեր զիջուած թղթածրարներու կանոնաւորման եւ բարդուած խնդրոց լուծման համար: Բայց հանրային թէ մասնաւոր բազմազան խնդիրներուն մէջ ամէնէն կենսականներն են հողային, ազգային սեփականութեանց, կրթական եւ զինուորագրական հարցերը:

1, Հողային եւ սեպհականութեան խնդիր. Հողային խնդրոյն վրայ վերջնական եզրակացութեան մը յանգելու համար, Ազգ. Վարչութիւնը՝ Օսմ. Երեսփոխաններու հետ խորհրդակցութենէ մը ետքը՝ պէտք տեսաւ Պետական Խորհրդոյ մէջ պատրաստուած եւ Օսմ. խորհրդարանին մատուցանելու օրինագծին վրայ գաղափար մը կազմելու: Նոյնպէս Ազգ. սեփականութեանց խնդրոյն վրայ եւ խորհրդակցութիւններ կատարուած են ի նկատ առնելով մասնաւորապէս Ղալաթիոյ Խասթէխանէ խանի խնդիրը, որու մասին Քաղաք. Ժողովն, Ազգ. Երեսփոխաններէ եւ փաստաբաններէ խառն պատուերակութիւն մը պիտի ներկայանայ Վարչապետին եւ Գատական նախարարին, բացատրելու համար՝ թէ ինչ սխալ եւ անարդար միջոցներու կը զիմուի, ազգին իրաւունքը ձեռքէն խլելու համար:

2, Զինուորական խնդիր. Վերոյիշեալ խնդիրներու մէջ, զինուորագրական հարցն եւ այժմէական ստիպողութիւն մը առած է: Իրաւէ՛ որ իրենց կոչումին եւ պարտականութեան կատարեալ գիտակցութիւնն ունեցող սպաներու հրամանին տակ գտնուող հայ զինուորներու վիճակն ըստ ամենայնի լաւ է, բայց տեղ տեղ անոնք շատ աննպաստ վիճակի մէջ կը գտնուին՝ մասնաւորապէս իրենց կրօնական պարտաւորութեանց կատարման մասին: Տէտէաղաճէն կը գրեն օրաթերթերուն թէ Գըրճալըի մէջ—ուր 118 զինուորներ կը գտնուին զանազան գաւառներէ—չորս հայ զինուորներ մեներ են՝ առանց խոստովանելու եւ հազորդուելու: Եւ նոյն իսկ զազաղ չգտնուելով, Իսլամ զինուորներու յատուկ զազաղի մէջ գրուեր եւ առանց հոգեոր արարողութեան թաղուեր են: Այդ չըջանի զինուորները կը խնդրեն, ուրեմն որ կամ իրենց հոգեոր հոյժի մը զրկուի, եւ կամ փոխադրուին այնպիսի տեղ մը, ուր գոնէ քրիստոնեայ եկեղեցի մը գտնուի: Պատրիարքարանը վստահ ենք թէ կը փութացնէ իր զիմումները՝ պատկանեալ պաշտօնատան մօտ, բանակին մէջ գտնուող

հայ զինուորներու հոգեւոր պարտականութեանց անթերի կատարման միջոցներ աներինելու համար՝ Նոյնքան անհրաժեշտ և ստիպողական է գիմումը, առ որ անկէ՝ դպիրներու զինուորական ծառայութենէ զերծ գանուելուն մասին, որ վերջնական եւք պէտք է ստանայ անյապաղ:

Ասիկէ զատ, Ազգ. կեդրոնական վարժարանի՝ իբրև Իսասիի Ալի կառավարութենէն պաշտօնապէս ճանչցուելուն համար ձեռնարկ ները ցարդ եւք մի շունենալով, աշակերտներէ ոմանք կը կանչուին գործչի տակ, մինչ ուրիշ օտար նմանօրինակ կրթական բարձրագոյն հաստատութիւնք՝ պետութենէն պաշտօնապէս ճանչցուած ըլլալով, անոնց աշակերտները զերծ կը մնան զինուորական ծառայութենէ: Մէկ երկու տարիէ վեր զինուորագրութեան գործողութիւնները շարունակելով հանդերձ, ինչպէս անոր յարակից զանազան հարցերու, նոյնպէս կեդրոնականի պաշտօնապէս ճանչցուելուն մասին ազգային իշխանութեան թոյլ վարմունքը մեծ միասնելու ցուռ բացաւ, որոնց նորագոյնն է կեդրոնականի աշակերտաց անթարկուած կացութիւնը: Այդ վիճակն արդար յուզում մը առաջ բերելով նոյն ուսանողներուն մէջ, ասոնք—ինչպէս կը կարգանք օրաթերթերու մէջ—, դասադուլ հռչակած են երեքշաբթի օրը, որոչեւով ի հարկին երթալ այն վարժարանները, որոնք պաշտօնապէս Իտատիէ ճանչցուած են և կը վայելեն անոր բոլոր իրաւասութիւնները: կեդրոնականի տնօրէն Մ. Նալպանտեան էֆ. նոյն օրը տեսակցեցաւ Տեղապահ Ա. Հօր հետ, որ խոստացաւ վաղըն փոյթ անհրաժեշտ գիմումն ընել, այդ աշակերտներու զինուորագրութեան յետաձգման համար: Յուսանք, որ կեդրոնականի աշակերտաց այս կարուկ ընթացքը առիթ պիտի ըլլայ Ազգ. Պատրիարքարանին՝ շարժելու և քիչ մը վաւթով՝ առկախ և անհետաձգելի խնդրոց անյապաղ կարգադրման համար: (*)

Կրթական Խնդիր.

«Բիւզանդիոնը» (ժարտի 14-ին) գրում է. «Այս շաբթու պիտի կատարուի կեդր. վարժարանին արձանագրութեան գործողութիւնը, ինչպէս տեղեկացանք կրթական նախա-

(*) Վերջին պահուն ուրախութեամբ կարդացինք թերթերու մէջ թէ Պատերազմական Նախարարը հաւանած է կեդրոնականի աշակերտաց զինուորագրական գործողութիւնը երկու երեք շաբաթ յետաձգել, մինչեւ խնդրոյն կարգադրութիւնը՝ Կրթական նախարարութեան հետ:

րարութենէն, և հետզհետէ միւս թաղային վարժարաններուն արձանագրութիւնները պիտի կատարուին այն հիմերուն վրայ, որոնք առաջարկուած էին Պատրիարքարանին կողմէ, ինչպէս հրատարակեցինք ասկէ առաջ:

Պատրիարքարանը, վերջին երեք նախարարներուն օրով բացատրեց, թէ իր պահանջումն ասկէ տասնըվեց տարի առաջ Հայոց և Յունաց Պատրիարքներուն և կառավարութեան միջև գոյացած համաձայնութեան գործադրութիւնն էր և ոչ թէ նոր պահանջ մը, և եթէ սահմանադրական կառավարութիւնը նախօրէ իրաւունքները կ'հաստատէ, պարտաւոր է յարգել նաև կառավարութեան հետ ասկէ առաջ գոյացած համաձայնութիւնը: Ահաւասիկ 16 տարի առաջ կրթական խնդրոյն շուրջ գոյացած համաձայնութեան թարգմանութիւնը:

«Վարժարաններու ուսմանց ցանկը (prohram) Պատրիարքարաններուն և Առաջնորդարաններուն կողմէ կ'աւարտուի կամ կ'վաւերացուի, ինչպէս ուսուցիչներու և կամ ուսուցչուհիներու վկայականները, բայց կառավարութեան տեղեկութիւն ունենալն ալ կարևոր ըլլալով, կրթքննիչներ պէտք է վարժարաններն այցելեն, և երբ վստահար դաս կամ առանց վկայականի ուսուցիչ տեսնեն, Պոլսոյ մէջ կրթական նախարարութեան և գաւառներուն մէջ տեղական իշխանութեան կողմէ Պատրիարքարաններուն և առաջնորդարաններուն հետ բանակցելով, այդ կարգի դասախօսութիւնները պիտի արգիլուեն, և առանց վկայականի ուսուցիչներ և ուսուցչուհիներ անոնց միջոցաւ պիտի փոխուին»:

Սակայն ոչ միայն անցեալ շրջանին մէջ այլ և հիմա կրթական քննիչներ Հայոց Պատմութեան դասախօսութիւնը վստահար կ'համարին և արգելքներ կ'յարուցանեն: Ինչպէս կ'տեսնուի, այս անգամ յոյն երեսփոխաններուն և Հայոց Պատրիարքարանին դիմումներուն հետեւանքով գոյացած համաձայնութիւնը նախկին որոշմագրին գործադրութիւնն է, բան մը որ ճանչնալ շուղուեցաւ նախօրէ կրթական նախարարէն և արդի նախարարը՝

Իսմայիլ Հազգը պէյ, աւելի ուղիղ մտածուով մը հետա-
մուտ գտնուեցաւ տրուած իրաւունք մը յարգելու: Հե-
տեաքար նոր իրաւունք մը կամ նոր առանձնաշնորհում
մը չի տրուիր Հայոց և Յունաց Պատրիարքարաններուն,
այլ արդէն իսկ տրուածն է՝ որ կ'յարգուի:

Մինչև հիմա մեր վարժարաններն արձանագրուած
ըլլան թէ ոչ, խնդիր չէ, որովհետև ոչ զինուորագրութիւն
կար՝ ուրկէ զերծ կացուցանելու աշխատէին մեր ուսու-
ցիչներ և բարձրագոյն վարժարանի աշակերտները, ոչ ալ
գալորոցական նպաստներու համար վարժարաններու վաւե-
րացեալ ըլլալն այնքան խիստ կերպով պայման դրուած
էր: Հիմա կառավարութիւնն այն երկու խնդրոց մէջ ալ
աւելի խիստ կը գործէ, հետեաքար ստիպողական դարձած
է արձանագրել տալ վարժարանները, և գոհարուցիչ է, որ
Պատրիարքարանը դիմումներէ և պնդումներէ վերջ յա-
ջողեցաւ սահմանադրական կառավարութեան ճանչցնել
այն վերին իրաւասութիւնը, զոր ճանչցած էր արդէն
բռնապետական կառավարութիւնը, բայց Պատրիարքարանը
ժամանակին իր ուսուցիչներուն ցուցակներն և վարժա-
րաններուն կարգացոյցները մատուցած չըլլալով, չէին
վաւերացուած: Այս կերպով խնդիր մը կ'վերնայ Պատ-
րիարքարանի յարաբերական խնդիրներու ցանկէն:

Շարաթ որ կը թական նախարար Իսմայիլ Հազգը պէյ
գրեց Պատրիարքարան՝ թէ Տեղապահ Ս.—ին պահանջած
կերպով ճ ամսուան պայմանաժամ տրուած է վարժարան-
ներու արձանագրութեանց գործողութիւնները կատարելու
և ուսուցիչներուն վկայականները վաւերացնելու համար,
հետեաքար պէտք է այս գործողութիւններն աւարտին
նոյն պայմանաժամին մէջ, որովհետև այլ ևս չպիտի երկարի:
Պատերազմական նախարարը հաւանած է այս կարգադրու-
թեան և նախարարաց Խորհուրդը հաստատած է եղած
կարգադրութիւնը, որուն հիման վերայ մինչև ճ ամիս ոչ
ուսուցիչներ և ոչ այլ երկրորդական վարժարանի բարձրա-
գոյն կարգի ուսանողներ զէնքի տակ պիտի հրաւիրուին:

Գաւառական գործեր

Պրուսայի Գաւառ. ժողովը անցեալ կիրակի օր մերժեր է Առաջնորդ Տ. Յովհ. Ս. Արքեպ. Արչարունի հրաժարականը, որ արդիւնք էր ժողովականներու՝ իրենց պաշտօնը շատանձնելուն և առաջնորդարանի անդոհացուցիչ վիճակի մը ննջարկուելուն: Եւ սակայն Արչարունի Ս. Կրկնած է իր հրաժարականը, և հրաժարագիր ուղղած է նաև Ազգ. Պատրիարքարան: Բայց Կեզր. Խառն ժողովը ևս մերժեց այդ հրաժարականը:

Կրօնափոխութիւն.—Անցեալ շաբթուան միջոցին հինգ հրէաներ՝ երկուքը այր և երեքը կին, և երեք յոյներ՝ մէկը այր և երկուքը կին՝ Ազգ. Պատրիարքարան դիմած են, ընդունուելու համար Հայ Եկեղեցւոյ ծոցը: Ի դէպ է յիշել՝ եթէ ըստ որոշման Կրօն. ժողովոյ, այս կարգի զիմունները այն ատեն միայն պիտի ընդունուին, երբ ամուսնական նկատումներով չէ որ կըլլան:

Կլիկիոյ Ս. Կաթողիկոսը Պատրիարքարան կը գրէ, թէ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը յետածգած է Լուսաւորչի տօնին, և կը խնդրէ, որ Տ. Յակօբ Աչոտ Եպ. ի հետ զրկուի նաև Տ. Գէորգ Արքեպ. կամ ուրիշ բարձրաստիճան եկեղեցական մը՝ նոյն ձեռնադրութեան համար: Խառն ժողովը հաւանութիւն յայտնեց:

Պիլէնիկի մէջ հաշտութիւն գոյացնելու համար, Նիկոմեդիոյ Առաջնորդ Տ. Ստեփաննոս Եպիսկ. Յովակիմեան ամէն ջանք ի գործ դրեր, բայց ձեռնունայն եղեր է: Ուստի հրահանգ կը խնդրէ Պատրարքարանէ՝ դառնալու Նիկոմեդիա: Անկարելի եղած է հաշտութիւն գոյացնել, նոյն իսկ եկեղեցին բանալու ալ կարելիութիւն չի տեսներ: Խառն ժողովը որոշեց աշխարհական պատուիրակ մ' ևս զրկել, աջակցելու համար Ն. Սրբազնութեան: Ի հարկին կառավարական աջակցութեան ևս պիտի դիմուի, եկեղեցին բանալու համար:

Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ Եպիսկ. կը գրէ՝ թէ վերջնապէս կը հրաժարի առաջնորդութենէ, և գործօն կեանքէ քաշուելով, պիտի ևրթայ Մաղնիսա՝ եղբօրը քով ապրելու համար:

Քրօվիսեցսի (Ամերիկա) մէջ հաստատուած «Տուգասար (Սերաստիա) գիւղի Ուսումնասիրաց Ընկերութիւնը» 100 Անգլ. ոսկի ղրկած է Հ. Բ. Ը. Միութեան, նոյն գիւղին մէջ վարժարան մը կառուցանելու համար, և խոստացած է 200 ոսկի ևս ղրկել նոյն նպատակով:

Սկիւսարի Յառաջագիմական լսարանին մէջ Դ. իրիկուն բանախօսեց Տ. Կոմիտաս վ., նիւթ ունենալով հայ գեղջուկ երաժշտութիւնը:

Գօնեա-Ագուերայէն հասած նամակներ սրտայոյզ տեղեկու-

Թիւններ կը բերեն նոյն քաղաքին մէջ անցեալները պատահած ողորումներուն վրայ: Քաղաքին մէջ տեղէն հոսող գետը, որ սառած էր 15 օրէ ի վեր, յորդելով ընաջինջ ըրեր է 250 տունէ բաղկացեալ Հայոց բնակարաններուն կէսը, յետին ծայր թշուառութեան մասնելով ժողովուրդը: Ընդհանուր վնասը 28000 ոսկի կենթադրուի: Հայոց եկեղեցին ու փարժարանը, նաև բողոքականաց ժողովարանը ողորուեր և անբնակելի դարձեր են: Կառավարական 300 ոսկի նպաստէն մարդ գլուխ 60 փարա ինկեր է: Մնացեալն ինքնին կը գուշակուի:

Հայ Հռովմեականութենէ դարձած Շիրինեան վ. ի ընթացքին նկատմամբ գայթակղալից տեղեկութիւններ տրուած ըլլալով, Կրօն. ժողովն իր յանաջիկայ նիստին կոչած է զինքը, լսելու և քննութիւն կատարելով հարկ եղածը գործադրելու համար:

Նոր սպանութիւններ Բաղքի մեջ. — Աղթամարի Կաթող. փոխանորդ Տ. Եզնիկ վ. կը ծանուցանէր ասկէ առաջ թէ մէկ քանի հայ երեւելիներ Շատախի մէջ սպանուած են Քուրդերու կողմէ, և անոնց մարմիններուն վրայ գտնուած են թուղթեր թէ, «Ան առանկ պիտի սպանուին հայ երեւելիները»: Այս անգամ նոր հետազիր մը՝ դարձեալ Տ. Եզնիկ վ. էն՝ կը գուժէ նոր սպանութիւններ, Ազդ. Պատրիարքարանի ուղղուած այդ հետազիրը կըսէ թէ քանի մը օր առաջ եթէր Հայ երեւելիներ՝ Աղթամարի վիճակէն Քիւրդերու կողմէ բռնուեր և անոնցմէ չորսը սպանուեր և երեքը ծանրապէս վիրաւորուեր են: (Տաճար):

Երուսաղէմայ գործեր՝

Կ. Պօլսոյ լրագրները հաղորդում են. — Երուսաղէմայ պատրիարքական տեղապահը մտադրուելով նշանեան Տ. Մեսրոպ վարդապետին ժառանգաւորաց դպրոցի տեսուչ կարգել՝ կոչել է Երուսաղէմ, և Մեսրոպ վարդապետը մարտի 17-ին պէտք է որ Պօլսից դուրս եկած լինի Երուսաղէմ՝ վերադառնալու համար:

— Պատրիարքական ընտրութիւն. Երուսաղէմայ պատրիարքական ընտրութեան գործողութիւնների վերայ հակելու համար Հայկ Խօճասարեանի հետ Ա. Համամճեանն էլ, որ լաւ գիտակ է Երուսաղէմայ գործերին, Զատկից յետոյ Երուսաղէմ պէտք է գնայ:

— Ֆրանսական նաւաբաժնի հրամանատարի այցելութիւն. Ֆրանսական նաւաբաժնի հրամանատարը 10

սպաներով եաֆայից Երուսաղէմ է գնացել և ի միջի այլոց այցելել է մեր Ս. Յակովբեանց վանքը: Պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը պատրիարքարանի մեծ դահլիճի մէջ սիրալիր ընդունելութիւն է արել հրամանատարին, որը գոհ ընդունելութիւնից՝ մտել է Ս. Յակովբեանց տաճարը դիտել է հնութիւնները և յայտնել է, թէ այցելել է Սպանիայում և այն տաճարը, ուր թաղուած է Ս. Յակովբ Առաքեալի մարմինը:

«Բիւզանդիոն»-ից (փետր. 21, 23,) Մակար վարդապետ Տէր Յովհաննէսեանի յօդուածից քաղուած օ. էն.

1. Վանքի ծովակ. Ծովակի ջուրը աղի, լեղի և դառն է. լոզանքի համար առողջարար և օգտակար: Արտադրութիւններն են բորակ, որ արդիւնաբերում են աւանցիք, և տառեխ ձուկ: Լճի վերայ Տ. ից աւելի առագաստաւոր նաւակներ կան, որոնց նաւավարները մեծ մասամբ հայ են: Լճակի շրջապատը 14 օրուայ ճանապարհ է: Մէջը կան Լիմ, Աղթամար, Կտուց և Առաէր անշէն կղզիները:

Լճի ջուրը հետզհետէ բարձրանում է, և ժամանակի ընթացքում իւր մէջ է առել շատ շէն տեղեր: Հին Խժիչկը, որ կից է եղել Լիմ՝ անապատին, այժմ ջրերի տակ է մնացել և աւերակները դեռ նշմարուում են:

1. Լիմ Աանապաս. Այս անապատը թուրքերը Խչիչ են անուանում, իսկ քրդերը՝ Դէրէ — Սէրէն (աղքատների վանք): Անապատի ագարակն է Արճէչի Մարզավանք գիւղը: Լիմ՝ անապատի շրջապատը $1\frac{1}{2}$ ժամ է, ուղիղ գծով, լայնքը կէս, իսկ երկայնքը $\frac{5}{4}$ ժամ: Այստեղ վար ու ցանք էլ է լինում: Լիմ՝ անապատը Վանում ունի վարելահող և արօտատեղի: Անապատն ունի պտղատու ծառերի և խաղողի այգի: Անապատում խմելու համար գործ են ածում ջրհորի ջուր, որ անսպառ է և կարծւում է, աղբիւրի հոսանք: Աօպատակութիւնների և կոտորածների ժամանակ շրջակայքի հայերից հազարաւոր անձինք իրանց ընտանիքով այս անապատում են պատսպարուել, և անապատը՝ թշուառ

ժողովըրդի վիճակը ամօքելու համար ամեն ձեռնտուութիւն արել է բաշխելով հաց, ձէթ, վառելիք փայտ ևլն. կղզին ցամաքից մի ժամ հեռի է. Անապատը ծովափին ունի ագարակ, որ կոչուում է դրսի տուն. Սրբավայրերից մէկն էլ կոչուում է Էջմիածին: Դրսի տան այն բնակարանում, որ շինել է հանգ. յայտնի Պօղոս եպիսկոպոսը, պատասպարած են 12 որբեր: Լիմ անապատը ունի հազարաւոր օրավար հողեր, արօտատեղիներ, վան քաղաքում և շրջակայ գիւղերում ու աւաններում բազմաթիւ տներ, խանութներ, ջրաղացներ և ձիթհաններ. սակայն հողերն անմշակ, շէնքերն խարխուլ գրութեան մէջ են և սպասած արդիւնքը չեն տալիս:

Լիմ անապատն ունի ագարակներ՝ Ներքին և Վերին Էջմիածին և Ս. Սահակ անունով: Վերին Էջմիածինն ունի մի հոյակապ մատուռ, ուր Վարդավառին բաւական ուխտաւոր է գնում: Այստեղ եղել ին խաղողի ու ծառապտուղների այգի, և ծառաստան, թթենիներ և շերամատուն, որոնք այժմ քրդերի բարբարոսութեան պատճառով լքուած են: Էջմիածին մի լեռն է, որ ունի 7—8 ժամ շրջապատ, և այս շրջապատի վերայ կան 10—14 ծառաշատ գիւղեր: Ներքին Էջմիածինը ունի մի եկեղեցի, իսկ Ս. Սահակը լեռան գագաթին շինուած մի վանք է հրաշալի տեսարաններով դէպի ծովն ու դէպի Բզնունեաց, Քաջբերունեաց և Առբերանոյ լեռները: Ս. Սահակ վանքի ուխտը Համբարձման տօնին է. Լիմ անապատի եկեղեցին շինել է Աղթամարի Զաքարիա կաթողիկոսը Ս. Գէորգի անունով. վանահայրն է մի եպիսկոպոս և միաբաններն՝ 7 վարդապետ: Լիմ անապատը բաղկանում է չորս մասից. ա. կղզի բ. դրսի տուն գ. Էջմիածին, դ. Ս. Սահակ:

2, Աղթամար. Աղթամարը մի բարձր ժայռաքար է, բնական բերդ: Այստեղ վար ու ցանք չի լինում: Արծրունեաց Գագիկ թագաւորը 915 թուին հիմնարկել և 921 թուին աւարտել է Ս. Խաչ եկեղեցին Մանուէլ ճարտարապետի ձեռքով* ԺԹ. դարի միաբանութեան մէջ ար-

* Աղգագր. Հանդէս XX դիրք. 1910 թ. № 2 եր. 197.

դիւնաւոր եղել է Խիզանցի Յակովբ եպիսկոպոսը, որ վանքի միաբանութեան սենեակներն է շինել և մի ջրաղաց է գնել ընծայել: Այժմ երեք միաբան վարդապետներ կան՝ մէկը վանքումն է ապրում իսկ երկուսը դրսի տանը: Աղթամարը համանուն թեմի կաթողիկոսարանն է: Հանգուցեալ Խաչատուր կաթողիկոսի մահից յետոյ կաթողիկոսական աթոռը թափուր է. տեղապահն է Յովսէփ եպիսկ. Խոստեղեան, որ 80 տարեկան մի ծերունի է և ձեռնհաս չէ վանքի նիւթական, բարոյական և կրթական բարգաւաճման համար մի բան անելու:

Վանից Աղթամար ճանապարհը Ոստանի վերայով մինչև Ախավանք, որ Ախթամարի նաւանգիտն է, կառքով 6 ժամ է տևում, իսկ Ախավանքից նաւակով $\frac{1}{2}$ —1 ժամ, իսկ Աւանց նաւահանգստից տեղական նաւակներով 4 ժամ: Սկսած տաճարից կղզու վերայ բոլոր շինութիւնները հնացած կիսաւեր են. Ախավանքում կաթողիկոսարանի և դպրոցի լաւ շէնքեր կան:

3. ԿՏՈՒԿ ԱՆԱԿԱՏ. եկեղեցին շինուած է Ս. Կարապետի անունով: Այստեղ վար ու ցանք չի լինում: Ծովը այնքան բարձրացել է, որ սպառնում է վանքի սենեակները լափել: Կտուց անապատը ծովից դուրս ունի ընդարձակ և բարեբեր հողային կալուածներ և ջրաղացներ. Կտուց անապատի միաբաններն են մի վանահայր եպիսկոպոս և 2 վարդապետ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Բոլգարիայի Հայոց առաջնորդական խնդիր.

Պատրիարքական Սրբազան Տեղապահը իբրև վաղեմի ծանօթ մասնաւոր այցելութիւն է տուել բոլգարների էկզարխ Տ. Եօսէֆին. խօսակցութեան ժամանակ շօշափուել է ա. Բոլգարիայում հայ առաջնորդութիւն հաստատելու խնդիրը. բ. մինչև բոլգարահպատակ ուսուցիչների պատ-

րաստութիւնը թողաւութիւն, որ Օսմանեան հպատակ
ուսուցիչները պաշտօնավարեն: Սրբազան էկզարխը խոս-
տացել է կարելի աջակցութիւն ցոյց տալ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՅԻՆ

Արտասահմանեան լրագրերը հազորդում են, որ
Մուշեղ եպիսկոպոս Սերովբեանը ընտրուել է Ամերիկայի
Հայոց առաջնորդ: Այս ընտրութեան առիթով ծագել է
երկու խնդիր. նախ, քանի որ Ամերիկան էջմիածնի թեմ է
և առաջնորդը հաստատում է Ամենայն Հայոց Վեհ. կա-
թողիկոսից, այժմ, երբ հայրապետական գահը թափուր է,
ով պէտք է հաստատի ընտրուած առաջնորդին և չհաս-
տատուածը կարող է առաջնորդական իրաւունքներ գոր-
ծադրել:

Բ. Քանի որ Տ. Մուշեղը Սոյ եպիսկոպոս է, կարող է
էջմիածնայ թեմում պաշտօնավարել. երկու հարցերն էլ
սկզբունքային հարցեր են:

Անկախ այս խնդիրներից՝ Տ. Մուշեղ եպիսկոպոսը
ներկայ վայրկենում վտարանդի լինելով Օսմանեան կայ-
սերութեան սահմանից՝ չի գտնուում ոչ Սոյ կաթողիկո-
սական և ոչ Կ. Պոլսոյ պատրիարքարանի իրաւասութեան
շրջանում: Թէև շուկներ են լսում, որ Ամերիկայի Հայերը,
որպէս Տաճկաստանի գաղթականներ Օսմանեան կայսե-
րութեան մէջ սահմանադրութիւն հրատարակուելուց յետոյ
տրամագրութիւն են ցոյց տալիս նորից Կ. Պոլսոյ պատ-
րիարքարանի իրաւասութեան տակ մտնել, բայց պատրիար-
քարանը հնարաւոր կը գտնի Տ. Մուշեղ եպիսկոպոսին
առաջնորդ հաստատել, քանի որ հանգուցեալ Հայրապետի
հաճութեամբ կազմուած առաջնորդացուների ցանկի մէջ
Տ. Մուշեղ եպիսկոպոսի անունը չը դրուեց:

Այժմ՝ նոյն Մուշեղ եպիսկոպոսի պատճառով Ամե-
րիկայի Հայերի կրքերը սաստիկ յուզուած են: